

բածուէր Տիւրոսի վաճառաշահ քաղաքներէն (այսինքն նոյն իսկ Պէյրութէն սկսեալ) «մինչեւ Հայֆա» (այսինքն նոյն իսկ մինչեւ Տորա), վասնզի Սիդոնացիները օր մը այս քաղաքը գրաւեցին Փղշտացիներէն ծիրանիի այս խեցեմորթներուն պատճառաւ: Ասկաղոնացիները վրէժխնդրութեան համար Սիդոնացիներու նաւատորմը խորտակեցին և քաղաքը մոխիրի վերածեցին: Բաց աստի, խեցեմորթը (murex trunculus) որմէ կը հանէին թանկագին ներկը՝ Կարմեզոս լեռան ծովեզերքին վրայ առատութեամբ կար, և ծովը տակաւին դուրս կուտայ այս խեցեմորթները: Երգ երգոցը թերևս ակնարկութիւն մը կ'ընէ այս ծովուն ծիրանի արտադրող խեցեմորթներուն, երբ կ'ըսէ. «Գըլուի քո ի վերայ քո իբրև զԿարմեզոս, հիւսք գըլխոյ քո իբրև զծիրանի» (Է. 5): Ուստի հրաշալի բան մը չէ Porphyria Novissima մը գտնել Կարմեզոսի ծովափերուն վրայ: 1187 ին Սալաէտտին տիրացաւ Հայֆայի, բայց 1191 ին երբ Ֆրանկները Ա. քքիան գրաւեցին, բոլորովին քանդեց քաղաքը Սաչակիրներուն միայն աւերակ մը թողելու համար: Վերջինները շէնցուցին զայն մինչև իրենց մեկնումը 1292 ին (Bar. gd. էջ 347—351):

Կարմեզոս լեռը. — Հայֆայի մեծ հրապոյրն է Կարմեզոս լեռը: Աստուածաշունչին մէջ մէկ անգամ կը յիշատակուի «ի Կարմեզ լեռ ծովակողմն» (Յես. ԺԹ. 26) անունով, Պաղեստինի հարաւը գտնուած համա նուն ուրիշ մէկ լեռէն զանազանելու համար: Եղիա մարգարէն բնակեցաւ Կարմեզոս և հոն գործեց հըրաշքներ, այս պատճառաւ ժողովրդեան լեզուով ան կոչուած է ճիպիշ Մար Իյիսս (Ս. Եղիայի լեռը): Գ.